Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

07 դեկտեմբերի 2016 թ.

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր

Վարկ No P148836

Պայմանագիր # TGQ-08

TGQ-08, Գավառի թիվ 5 մակնապարտեզի վերակառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **«TGQ-08, Գավառի թիվ 5 մակնապարտեզի վերակառուցում»** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:
2. Սույնով **Գավառ քաղաքի Ծրագրի իրականացման կոմիտեն** հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից **«TGQ-08, Գավառի թիվ 5 մակնապարտեզի վերակառուցման»** համար:

   Որակավորման պահանջները ներառում են.

   ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **247,000,000** ՀՀ դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **143,000,000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **286,000,000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27,000,000** ՀՀ դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված «**Քաղաքացիական**», «**Հիդրոտեխնիկական**» և «**Էներգետիկ**» լիցենզիաներ:
3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:
4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից և ուսումնասիրել

Մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10.00–17.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Կ.Ուլնեցու 31, 4-րդ հարկ, 406 սենյակ:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները Մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:
6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2017թ-ի հունվարի 11-ին, ժամը 12:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:
7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով: Յուրաքանչյուր Փաթեթի հայտը պետք է ուղեկցվի առանձին Հայտի ապահովման հայտարարագրով:
8. Վերոնշյալ հասցեն է՝

Ում. Գրիգոր Բոշյան

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ծրագրի իրականացման կոմիտեի նախագահ

Հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գրիգոր Լուսավորիչի 12

/քաղաքապետարան/

Հեռ. 094 06 33 63